



ՑՈՒՑ Ա. Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա) 3 Ծարականներ № 229:
(Պահպանակի վրա) Յրթ. Ած.ատուրեան,
Երուսաղէմ, 1891.

Նուէր Հայաստանի

ի որդւոյն Արմենակ Ասատուրեանի կողմանէ:

Նիկոսիայ, Կիպրոս, 1969:

Թ. 253ա.—Պետրոս.

Գաղտնիք և արուեստ մոգութեան

թիւ Արևելքի 1909

Թթ. 259ա և 260ա.—Յուրաքանչյուր թերթում կա
մեկական երկրաչափական գծագրություն:

№ 321

ԱԿՏԱՐԱՆ

Թերթերը՝ 250:—Պրակները՝ $1+20=21$, յուրա-
քանչյուրը 12 թերթից, բացի՝ Ի՝ 9, Ա, ԺԷ, ԺԸ՝ 11, Բ՝
14, և մի պրակ էլ՝ 14 թերթից հավելվածական կա
ձեռագրի սկզբում:—Մեծությունը՝ $21,7 \times 16,5 \times 6,5$
սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—
Կազմը՝ կաշեպատ տախտակ:—Պահպանակները՝
սկզբում կա մի թերթ թուղթ, որ կազմած է կազմի:
Թղթի վրա գունավոր նկարված է հասարակ երեք
դիմագիծ:—Վիճակը՝ անբավարար:—Գրությունը՝
երկպոս:—Դատարկ թղթերը՝ 14բ:—Տողերը՝ 21—
22:—Գծումները՝ ճշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Ջար-
դագրություն՝ ձեռագրի մանրանկարչությունը հասա-
րակ ոճ ունի: Գրքի սկզբում կան 14 էջ զանազան
նկարներ առնված Հիսուսի կյանքից, երբեմն լրիվ
էջի, երբեմն էլ կեսական էջի ծավալով (թթ. 1բ—
8ա): Ապա կան 10 էջ խորաններ (համաբարբառ)
թթ. 9բ—14ա: Ձեռագրում կան երեք ավետարանիչ-
ների նկարները ամբողջական էջի ծավալով (թթ.
15բ, 127բ, 197բ): Կան չորս կիսախորաններ (թթ.
16ա, 85ա, 128ա, 198ա): Ձեռագիրն ունի հասարակ

* Ծարոնակված «էջմիածին» ամսագրի 1964
թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի
№№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվա-
կանի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի
№№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№
Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից և
Ը-ից:

ոճով նկարված զարդագրեր, թռչնագրեր, մարդա-
գրեր և զազանագրեր, ինչպես նաև լուսանցազար-
դեր, թռչուններ, կենդանիներ, զարդեր, սրբեր, զըմ-
բերներ և մարդագլուխ թռչուններ:—Գրիչը՝ Վարդան
Կատակոնց:—Պատվիրատուն՝ Վարդան պարոն
Տիր:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1896 թ.:—
Վայրը՝ Արծկե (Բզնունցաց գավառ):—Ծանոթու-
թյուն՝ Մայր Աթոռի Ձեռագրատունը 1966 թ. հունի-
սի 10-ին նվեր է ստացել սույն ձեռագիրը երեսնա-
բնակ հայրենադարձ Լուսիկ անունով մի բարեպաշտ
օրիորդի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 248բ.—Փառք ամենատուրք Երրորդության Հօր
և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ որդւոյ շնորհօքն անարտեցա-
նուհարաշ և հոգիազարդ վարդափոթիք բուրաստուն
աւետարան, զոր շաղկապեալ երանեալ աւետարան-
չացն ըստ բազմերանգ գունոցն ի մի ուստան անգե-
լով հաճար. զոր արեւստ անգեալ անուշոացաց ծաղ-
կանց իոյ եփեցական կազմութեամբ որ ըստ հոգւոյն
յատկութեան իմանի զանազան որակութեամբ զա-
ղաբարեղով ըստ դքունց արփիացելոց զի յայսմանէ
կատարելութեան չորս աւետարանքս ի բազում
պատճառէ, չորեքերայեան կենդանիք մարդ, առիծ,
նզն, արծիւ: Չորս միւթ աշխարհիս՝ հող և ջուր, արդ
և հուր: Թշնամիք անհաշտելիք և սիրելիք անքակ-
տելիք: Չորս չորք գիրք անուան ամենատուրք Երրոր-
դութեան՝ Հայր, որդի, հոգի: Չորս գետ բոխեալ ի
դրախտէն Փխտն, Գեհոն, Տիգրիս, Եփրատեզ: Չորս
անկիւն չորս եղջիւրք սեղանոյն, չորս դէմք սրբոյ
խաչին, չորք առաք (թ. 249ա)—ինութիւն, հոգւոյ՝ խո-
լեմութիւն, արիութիւն, օղջախոյնութիւն և արդարու-
թիւն: Չորս ծագ տիեզերաց՝ արևելք, արևմուտք,
հիւսիս և հարաւ: Չորս բանք աւետարանիս՝ պատ-
գամ և պատկիրան, պատճալիք և աւետիս: Չորս
բանիս խօսի աւետարանս հրամանաւ և խրատով
օրինակաւ և վկայութեամբ և այլ բազում պատճառք
են յորս գաղափարին չորեքեան աւետարանքս: Եւ
ես յետին բանասիրաց և կոխան ամենայն կարդա-
ցողաց և կարգաւորաց սուտանուն անպիտան մեղօք
լցեալ և ապականեալ. Վարդան ստրուկ և փծուն
գրիչս (եւ գրէ) որ մականուն Կատակոնց անեն գրե-
ցի գրագիշաբն և հոգիազարդ տառս յիշատակ վա-

յնպիսի: Եւ գրեցաւ սա ի թվականութեանս հաշոց իւրին (1696 թ.—Ն. Մ.) ամին, ի հայրապետութեան տեսնոն Նահապետ (և) տ կաթողիկոսի, ի մերոյս ներհանգի վարդան պարոն Տիրի, ի գաստն Բզնունեաց, որ այժմ կոչի Արծնէ, որ թուրքի գրի թառով մզթաւ աղան ասեն: Արդ որք հանդիպիք սուրբ աւետարանիս տեսութեամբ կամ ընթերցելով կամ գաղափար առն(ե)լով ի պէտս օրինակի յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք փծուն վարդան գրչի և իւր ծնողացն՝ հօրն Տէր Աւետիս քահանային, և մօրն Հայիմարին, ամէն: (Թ. 249բ) Որոյ ցանկացող եղեալ և շարժեալ ի սէր աստուածային գանձուցս և քանաց ստանալ գանառիկ մեծութիւն և զգանձս անկողոպտելի ի վայելումն անձին իրոյ և հոգոյ յիշատակ ծնողացն ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում անջատ թղթի վրա գրված է) Ձեռագիր Ավետարան, նվեր ա. Էջմիածնի վանքին բարեպաշտութի մի ոմն օրիորդի կողմից, Նարեկ վրդ.—ի միջոցով: 10-6-1966 թ.:

Թ. 1ա.—Սուրբ Ծաղիկ Աւետարան: (Սույն էջում կա տասը տող նուորգրով գրված անընթերցելի մի գրություն):

Թ. 8բ և 9ա.—(Նուորգրով գրված աղոթք և մաղթանք):

Թ. 15ա.—Ալաշկիրտ, Մանկասար գիւղացի Տ(էր) Սիմոն Տ(էր) Սիմոնեան ձեռնադրեալ Սուրբ Կարապետի վանք:

Թ. 184ա.—Ով եղբայր դաւառեցաւ:

Թ. 249բ.—Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք հեզաբոգի պարոն Սարգսին, եղբարցն Զաքարիին, Մելքոնին, Սարգսի որդոյն Եղօյին, Կոնակցուն Եղիսին, որդուն Փիրոյինմալ խանին, Եր...ոսին, Խլղադին, Նուպարին ... իւրեանց ...եան մերձատրաց մեծին և փոքուն: Ոք աշխատաք կայ Աստուած զիրեանց մեղքն թողու ամէն: Դարձեալ յիշեցէք զպարոն Սարգիսն, զհայրն Միրզեան, մարն Դարիսն ամէն:

Թ. 250ա. և 250բ.—(Վերոհիշյալ անունները կրկնվում են):

№ 322

ԱՌԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 252:—Պրակներ՝ 22, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի ԻԲ՝ 2, Ա. և Ե՝ 11:—Մեծությունը՝ 21×16,5×5,5 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—Կազմը՝ հաստ ստվարաթուղթ:—Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական հասարակ սպիտակ թուղթ:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ երկսյուն:—Դատարկ թղթերը՝ 68բ, 118բ, 192բ, 251բ, 252ա և 252բ:—Տողերը՝ 21:—Գծումները՝ ճշշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Ջարդագրություն՝ ձեռագիրն ունի գեղեցիկ ոճով մանրամկարչություն: Կան չորս կիսախորաններ (թթ. 2ա, 69ա, 114ա և 198ա), ինչպես նաև բազմաթիվ սիրուն լուսանցագրեր, թռչուններ, գմբեթներ, խաչեր, վառվող մոմեր (թ. 67ա), մարդագլուխ թռչուններ, բույսեր և ծաղիկներ:

Ձեռագիրն ունի նաև գեղեցիկ զարդագրեր, թռչնագրեր, գազանագրեր և մի հատ մարդագիր (թ. 2ա):—Գրիչը՝ Անանիա արեղա:—Պատկերատուն՝ Ստեփանոս քահանա:—Ծաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1469 թ.:—Վայրը՝ Հերմոնի վանք:—Մանրություն՝ ձեռագիրն ստացվել է նվեր Լոնդոնից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 249բ.—Փառք անել բանին Աստուծոյ, երիցն ի միում կատարեալ առանձնաորութեամբ և միաւորեալ ըստ աստուածութեան եռահրաշ, անբաժանելի և անքակ տէրութեան միասնական սուրբ Երրորդութեան կրկնեալ փառք ի գոհց բնաւից յիմանալեաց և ի սգալեաց:

Գծագրեցաւ վսեմական անբաղդատելի, աստուածունակ, արփիահրաշ, գերափայլ և տիեզերալոր չորեքծագեան կտակս որ հաճապազ հնչէ ի լսելիս. Քրիստոսի հաւատացեալ ժողովրդեանդ յաղագս փրկութեան աշխարհի և արքունցանէ և կերակրէ զշուրմ կենդանական և զհացն անմահական յեղեմեան վտակացն ընդ քառանգին ողորտս տիեզերաց, ի զուարճումն և ի պարարումն զովացութեան, պասքեալ և կարասեալ ժողովրդեան: Եւ է սա ուրախութիւն տրամեցելոց, բծիշկ հիւանդաց, քաւիչ մեղատրաց, լոյս խաւարելոց, դատիարակ մահագանց, սփոխանք երիտասարդաց, հաւատաւորսին ծերոց, կենդանութիւն մահացելոց, սրբիչ ամենայն ախտից, սաւափումն և հալածիչ դիւաց (թ. 250ա) և նորին, և անմահութիւն կենդանութեան պարգևեցէ ամենեցուն որք հաւատով և յուսով դիմին ի սա և կատարեցէ Քրիստոս ի ձեռն հրամանիս իւրոյ ամենեցուն, թէ որ խնդրէ առնու, և որ հայցէ գտանէ, և որ բախէ բացցի մմա:

Եւ արդ գրեցաւ սա ի թուաբերութեանս հաշոց ԶԺԸ (1469 թ.—Ն. Մ.), ի հայրապետութեանս Տեառն Ըղբստակէսի: Գրեցաւ սուրբ աւետարանս ի վանքս Հերմոնի ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչիս, և Սուրբ Յակոբիս, և Սուրբ Ստեփանոսիս, և սուրբ վարդապետացս, որ աստ կան հաճուցեալ և ի յառաջնորդութեան Սարգիս րարունապետիս:

Ձեռամբ ստույանուն Անանիայի գրչի, որ անուամ(բ)ս միայն խաբէղա և ոչ գործով: Արդ ամենայն ոք բարոյ ցանկալ վասն սիրոյ արքայութեան, որպէս ասէ առաքելսն. թէ երանի որ ունիցի զսուս ի Սիոնի և ընդան ի Երուսաղէմ: Եւ Ստեփանոս քահանայս ստացաւ Սուրբ Աւետարանս և ետու գրել զսպ յիշատակ ինձ և ծնաւորաց իմոց, հաւրն իմո Ամիրին, և մարն իմ Թաճիկին, և հարեղբարն իմ Մկրտչի կուսակրան արեղայի, և կողակցին Խրմարթին, և որդին իւր Յակոբ, Ալէքսանոս, Գրիգոր, Արիստակէսն, (թ. 250բ) և զդատորն իմ զՄարգարիտն, Նուկպարն, և զբոլորն իմ Նուրմէլիք, զՀուսիսմէ, և զամենայն արեան մերձատրսն, զկենդանիս և զհաճուցեալսն, և Աստուած որ առատն է ի տուրս ողորմութեան. ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմեաց(ի) իւր միւս անգամ զալըստեամբն ամէն և եղիցի:

(Ծարումակելի)